ԿԱՊԻՏԱԼ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1/1

Ք.Գավառ 29.03.2022թ.

Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղար Ս. Խլղաթյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Պատվիրատու, մի կողմից, <<Գեղարքունիքի երկրագիտական թանգարան>>ՊՈԱԿ-ը ի դեմս տնօրեն Բ. Հովեյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա , այսուհետ՝ Կատարող, մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021թ. դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշմամբ, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Պատվիրատուն ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին տրվող բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման ,,Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին,, հոդվածով 7000,0 հազ. ՀՀ դրամ գումարը հատկացնում է կատարողին:

1.2. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը հատկացվում է Գեղարքունիքի երկրագիտական թանգարանին՝ գազաֆիկացման և ջեռուցման համակարգի կառուցման նպատակով:

1.3. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը ներառում է աշխատանքների և ծառայությունների արժեքը, ներառյալ հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները:

2. Դրամաշնորհի տրամադրման և ծախսման կարգը

2.1 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված է 7000,0 հազար ՀՀ դրամը մարզպետարանի կողմից տրամադրվում է «Գեղարքունիքի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ին Հայաստանի Հանրապետության 2022թ. պետական բյուջեով նախատեսված բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով:

2.2 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված 7000,0 հազար ՀՀ դրամը պետք է ծախսվի բացառապես ՀՀ կառավարության 2021թ դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշմամբ սահմանված՝ Գեղարքունիքի երկրագիտական թանգարանի գազաֆիկացման և ջեռուցման համակարգի կառուցման նպատակով::

2.3 ՊՈԱԿ-ը պարտավորվում է հաշվապահական հաշվառումը վարել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան և ապահովել սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված նպատակների իրականացման հետ կապված փաստաթղթերին ծանոթանալու, ինչպես նաև մարզպետարանի ներկայացուցչի կողմից կատարվող աշխատանքների վերահսկման համար ստեղծել բավարար պայմաններ:

2.4 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո մարզպետարանը սույն պայմանագրին կից հավելվածով սահմանված ժամկետներում՝ հիմք ընդունելով տվյալ ապրանքների,աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման նպատակով ՊՈԱԿ-ի և ընտրված մասնակցի հետ կնքված գնման պայմանագրի շրջանակում մարզպետարան

ներկայացված ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ծախսը հիմնավորող փաստաթղթերը , նշված գումարը փոխանցում է ՊՈԱԿ-ի համապատասխան գանձապետական հաշվին:

2.5 Ստացված դրամաշնորհի հաշվին նպատակային ծախսատեսակի կատարումից (ծրագրի ավարտից) հետո դրամաշնորհի չօգտագործված գումարը ՊՈԱԿ-ի կողմից եռօրյա ժամկետում ենթակա է վերադարձման ՀՀ պետական բյուջե:

2.6 ՊՈԱԿ-ի կողմից դրամաշնորհի գումարի կամ դրա մի մասի ոչ նպատակային օգտագործման դեպքում ոչ նպատակային օգտագործված գումարը ենթակա է հետ գանձման ՊՈԱԿ-ի միջոցներից, ինչպես նաև հնարավոր է սուբսիդիայի միջոցների հետագա հատկացումների դադարեցում:

2.7 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված աշխատանքների ավարտը սահմանվում է մինչև 2022թ. դեկտեմբերի 25-ը:

3 Հաշվետվություն

3.1 Եռամսյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ ՊՈԱԿ-ը մարզպետարանին ներկայացնում է եռամսյակային հաշվետվություն՝ մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը (եզրակացություն և հանձնման-ընդունման արձանագրություն):

3.2 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակների իրականացումից հետո 15-օրյա ժամկետում, ՊՈԱԿ-ը գրավոր մարզպետարանին է ներկայացնում աշխատանքների կատարման մասին վերջնական հաշվետվություն:

4 Այլ դրույթներ

4.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

4.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որոնք կնքվում են գրավոր:

4.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5 Կողմերի իրավաբանական հասցեները

Պատվիրատու ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	Կատարող Գեղարքունիքի երկրագիտական թանգարան ՊՈԱԿ ՀՎՀՀ 08400689 Գանձապետական հ/հ 900178000148
Ք. Գավառ ՀՎՀՀ 08404767 ՀՀ 900171078505 ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն Գլխավոր քարտուղար՝ _____Ս.Խլղաթյան /ստորագրություն/ Կ.Տ	Տնօրեն Բ. Հովեյան /ստորագրություն/ Կ.Տ

,,Գեղարքունիքի երկրագիտական թանգարան" ՊՈԱԿ-ին 2022թ. տրամադրվելիք

Կապիտալ դրամաշնորհի գումարները ըստ ամսական բացվածքի

N	Ամիսը	Գումարը(հազար դրամ)՝աճողական
1	Հունվար	-
2	Փետրվար	
3	Մարտ	
4	Ապրիլ	2100
5	Մայիս	2100
6	Հունիս	2100
7	Հուլիս	4900
8	Օգոստոս	4900
9	Սեպտեմբեր	4900
10	Հոկտեմբեր	7000
11	Նոյեմբեր	7000
12	Դեկտեմբեր	7000

Պ ա տ վ ի ր ա տ ու

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան

ՀՀ ՖՆ Գործառն. վարչ.

ՀՎՀՀ 08404767 ՀՀ 900171078505

Գլխավոր քարտուղար՝

Գ.Հեղինյան

Կ ա տ ա ր ո ղ

Գեղարքունիքի երկրագիտական

թանգարան ՊՈԱԿ

ՀՎՀՀ 08400689

Գանձապետական հ/հ 900178000148

Տնօրեն Բ. Հովեյան